

M. Archam
Poste Restante
Athènes — (Grèce)

ՄԻՈՒԹԻՒՆ

Տանակրի ֆրանք 4
Վեցամսեայ » 2

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՏԵԱՆ ԵՒ ՄԵՐ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ

Վերապահ. Հնչ. Կեդր. Վարչութիւնը իր բոլոր մասնաճիւղերուն հրահանգ տուեր է, որ իրենց գտնուած երկիրներու մէջ բնակող ազգայինները խրախուսեն մի քանի չեղոք անձերէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմելու, որը պաշտօն պիտի ունենայ պ. Արփիարը դատելու համար ընկերային առեւտրի մը պահանջիլ գրաւոր կերպով երկու կուսակցութիւններէն:

Այժմէն դժուար է գիտնալ թէ՛ պ. Արփիարի ընկերներն են որ զայն դատաստանի ենթարկել կ'ուզեն. թէ՛ պ. Արփիար ինքնաբերաբար ընկերային առեւտրի կը պահանջէ ինքզինքը արդարացնելու համար: Ինչ որ ալ ըլլայ, այս առաջարկին մէջ անկեղծութիւն կը նշմարուի, հետեւաբար կրնայ իր օգուտներն ունենալ, մանաւանդ որ երկու կուսակցութեանց միջև տիրած անհամաձայնութեան, գայթակղալից խլրտումներու և ըսի ըսաներու վերջ կը տրուի և համերաշխութիւնը ինքնին կը գոյանայ:

Ընկերային առեւտրի կազմելու երկու խնդիրներ կը ներկայանան. 1) Ժախքերը հայթայթելու միջոցը, կամ որ կողմէ վճարուելու որոշումը, 2) Արփիարը դատողներու խնդիրը. թէ՛ որոնք պիտի ընտրուին որ պահանջուածին չափ չեղոք, անաչառ ու անկողմնակալ ըլլան. խնդրոյն այս կարեւոր կէտերը ի հարկէ նկատի պիտի առնեն ընկերային դատաստան կազմողները որոնց ուշադրութիւնը կը հրաւիրենք այժմէն:

Պ. Արփիար ծանր ամբաստանութեանց տակ կը գտնուի այժմ. մենք և մեզ հետ ազգ. գործերով հետաքրքրուող բոլոր հայերս անհամբեր կը սպասենք այդ անաչառ դատաստանի արդար վճռին. եթէ պ. Արփիար անմեղ է, ամենքս ալ գլուխնիս հակելով ներողութիւն պիտի խնդրենք Դաշակցականները զրպարտիչ հռչակելով, իսկ եթէ մեղաւոր է. կուսակցութեան զայն հեռացնելով մեծ յոյսեր կրնանք ունենալ երկու քոյր կուսակցութեանց միացման կամ համերաշխ գործակցութեան:

Պ. Արփիար ամեն պարագայի մէջ պարտաւոր է մի առ մի բացատրութիւն տալ պ. Ժանկիւլեանի դժբախտ «Դիմակաւորներու», «Միութիւն»ի մէջ հրատարակուած «Լրտես-յեղափոխական»ի յայտնութեանց և

մանաւանդ «Իրօշակ»ի վերջերս հրատարակած «Յաւելուած»ներու բովանդակութեանց:

Մեր նախնիքաց թիւերով Բարեգի մէջ Ազգ. Խառն ժողով մը գումարելու առաջարկը ըրած էինք. ցաւալի է մեզ խոստովանել որ արտասահմանեան հայ մամուլը այդ ամենակարեւոր հարցի հանդէպ խոր լքուածութիւն կը պահէ, հակառակ Տիար Չերաղի յայտարարութեան, զոր մեր վերջին թուով հրատարակած էինք: Չգիտենք թէ մեր յարգելի կուսակցականները ինչ թաքուն նպատակներ ունին, որ խոյս կուտան այս ազգօգուտ ձեռնարկէն: Մենք պարտականութիւն կը համարենք յանձնարարել երկրորդ անգամ մեր Յեղ. կուսակցութեանց զլիաւոր գործիչներուն որ փութան պատասխանել Տ. Մինաս Չերաղի յայտարարութեան: Արդէն Հնչակեան կուսակցութեան կէնտրօնական օրկանն ալ իր վերջին թուով Յեղ. Դաշակց. մը կ'առաջարկէր. մեր հայրենակիցները թող լաւ գիտնան որ մեր ազգ. գործերը ամեն ժամանակէ աւելի այժմ տարտալ վիճակի մատնուած են: Կուսակցութիւնները իրարու դէմ դիմադրած, ազգ. թերթերը զիրար անուանարկելով՝ իրարու հասցէին կեղտոտ հայհոյութիւններ ու լուտ անքներ ուղղելու զբաղուած, Պատրիարքարանն ու ազգ. մարմինը ներկայացնող մեր ջոշերը անգործութեան մատնուած, երկրին հայ ժողովուրդը անպաշտպան վայրագ թիւրքի, քրիտի սրին ու բրին յանձնուած, մէկ խօսքով կորստեան ճանապարհը մտած ենք: Մեր այս ցաւերուն դարման մը մը տալով խորհող կա՞յ արդեօք, եթէ կայ թող հըրապարա, նետուի, բայց կ'երևի թէ իւրաքանչիւր անհատ իր չուվանը ներկելու կը նայի և «ինչո՞ւս պէտք» ըսելով մի կողմ կը քաշուի:

Եթէ մեր յեղ. կուսակցութեանց նպատակը անկեղծօրէն ազգ, շահերուն ծառայել է, ժամանակն է որ ջանան իրարու մէջ համերաշխութեան կապ մը գոյացնել, ու անմիջապէս Խառն ժողով մը գումարելով վճռեն թէ հայ յեղափոխութիւնը ինչ քաղաքականութեամբ պէտք է ընթանայ, պահպանողական, ինչո՞ւ համար չենք ուզեր տեսնել թուրքիոյ արդի կացութիւնը, որ ուղղակի մեր դատին հետ կապակցութիւն ունի: Թուսիոյ ազդեցութիւնը մեր կապակցութիւն ունի: Թուսիոյ ազդեցութիւնը մեր նախնիքի հետեւանօք, մեք ինչ կը խորհինք մեր ապագային վրայ. եթէ երբէք ռուսութեան պատերազմ մը ծագի, ունինք պատրաստութիւն մը շար-

ժելու որ մեր ազատութեան համար օգնութեան ձեռք կարկառեն մեզ Ռուսիա կամ Անգլիա: Մինչև ցարդ գոյութիւն ունեցող մեր կուսակցութեանց անջատ ուժերը եթէ ի մի ձուլենք, այնքան տկար պիտի տեսնենք անոնց նիւթական անձուկ վիճակը, որ ի հար ինչ պիտի կրնան 1000 հրացան ծախու առնել ու երկիր շրկել: Ուրեմն ի՞նչ է մեր նպատակը, որ բոլոր կուսակցութեան միջիններու պէս իրարու ետեւէ ընկած ուր երթալինս չլիտենք: Դժբաղդաբար կուսակցամուլութիւնը այնքան կուրացուցած է մեզ, որ մեր բիթն իսկ չենք տեսներ. ուր մնաց որ ազգին ցաւերն ու ապագայ կորուստը պիտի նախատեսենք:

Դաշնակցականները միութեան կամ համերաշխութեան համար վերակազմ. Հնչակեաններու հետ բանակցելու կը դժկամակէին, միմիայն պ. Արփիարի այդ կուսակցութեան մէջ ըլլալը խոչնդոտ համարելով, հիմա գրեթէ ամեն դժուարութիւն պիտի հարթուի եթէ պ. Արփիար դատաստանի ենթարկուի: Այս առաջարկը քանի որ այդ կուսակցութիւնը ինք կը ներկայացնէ մեզ, ըստ մեզ միութեան կամ համերաշխութեան գաղափարի յաջողութեան առաջին պայմանը կարելի է նշատել, բայց դիտելով պէտք է որ միայն Արփիար մը դատելով մեր գործերը չեն չըտկուիր. Ազգ. խառն ժողով մը գումարելու պէտքը դարձեալ անհրաժեշտ է մեր գործելու եղանակները գծելու համար: Խառն ժողովն ու ընկերային ատեանը մէկ ծախքով ըլլալու է: Չէ՞ որ արդէն ընկ. ատեանը Բարիդի մէջ պիտի կազմուի իբր յարմարագոյն տեղ, եթէ եզրպտոսի մէջ տեղի ունենայ, կրնայ հետեւանքը վտանգաւոր ըլլալ: Կը յուսանք թէ մեր բոլոր ազգայինները ձեռք ձեռքի տուած նիւթապէս և բարոյապէս ոյժ պիտի տան թէ՛ Խառն ժողովի թէ՛ Ընկերային ատեանի ժամ առաջ կազմակերպութեան:

Կը խնդրենք Տիար Մ. Չերազէ, որ եթէ ո՛ր և է կուսակցութեան մը պատասխան ստանայ հաճի իւր ազգագրու «Armenie»-ի մէջ հրատարակել:

ԱԶԱՏ ԿԱՐԾԻՔՆԵՐ

Պ ԹԱՓԱՌԻԿԻՆ

«Միութիւն»-ի 37 թուով ինձ ուղղած քանի մը տողը կը պարտաւորէ զիս անդամ մըն ալ գրել այն նիւթին վրայ՝ որու նկատմամբ իրապէս չափէն աւելի խօսուեցաւ ու գրուեցաւ, և արդիւնք մըն ալ չունեցաւ: Վիճաբանութենէ բնաւ չեմ ձանձրանար, ընդհակառակը կը սիրեմ զայն, բայց այնպիսի նիւթի վրայ և այնպիսի ձեւով որ ժողովուրդը օգտուի անկէ: Չեմ սիրեր անհատական նկատումներով եղած, անձնական կամ կուսակցական հաշիւներէ թելադրուած, և խեղաթիւրուումներով ու ենթադրութիւններով կատարուած վիճաբանութիւնը. վասն զի անիկա ժողովուրդը կը թուլացնէ և սխալ ուղղութիւն կուտայ անոր մտքին: Իմ սիրածս անկեղծ, անաչառ և փաստերով եղած վիճաբանութիւնն է որ հանրային միտքը կը շինէ և ուղիղ ճամբայէ կ'առաջնորդէ զանի: Իրօք այս խըն-

դիրն ալ՝ որուն վրայ կը խօսինք՝ կարեւոր է, և ազգային շահերը կը պահանջեն անոր լուսաբանութիւնը: Ու ես այդ ըմբռնումով է որ հետաքրքրուած եմ այս խընդրով: Ո՛չ անձնապէս անձանօթ ընկերի մը սէրը. ու կուսակցութեան մը աներեւոյթ շահը կը մղէ զիս այս խնդրով զբաղելու: Չէ՛, արդարութեան սէրը՝ ընկերի մը սէրէն, և ազգին շահը՝ կուսակցութեան մը շահէն շատ գեր ի վեր է ինձ համար: Իսկ հիմա որ անտեղի կը նկատեմ այս խնդրոյն վրայ վիճաբանելը. պատճառն այն է որ մինչև այժմ ամբաստանողներու կողմէն գրուածները սոսկ պոռնիքներ եղած են. որոցմէ բան մը չէ հասկցած ժողովուրդը, և պիտի չհասկնայ ասկէ ետքն ալ. եթէ նոյն բաներն են որ պիտի կրկնուին:

Միութիւն»-ի 35 թիւի մէջ կարդալով գրածդ՝ որ գրածներդ հաստատելու համար դրական փաստ կ'ուղէի՝ գոյաբար գրածս նոյնութեամբ հրատարակուած չէր: Շատ տարտամ և մէկ-երկու տեղ ալ սխալ արտայայտուած էր գրածներս: Կը պատասխանեմ թէ արդէն «ուշիմ և անկողմնակալ» ընթերցողը պիտի գտնէ դրական փաստը «Միութիւն»-ի թիւ 28-29-ի մէջ գրածներէդ: Նոյն «ուշիմ և անկողմնակալ» ընթերցողաց կը յանձնարարեմ վերստին կարդալ յիշեալ գրածներդ, ուր «անշուշտ» ներսով ու «անպատճառ» ներսով համեմուած ենթադրութիւններէ զատ ուրիշ բան պիտի չգտնեն ապահովաբար:

Իսկ այս խնդրոյն վերաբերմամբ «Իրաւունք»-ի մէջ եռասուել ստորագրութեամբ հրատարակուած յօդուածին մասին՝ պարտք կ'զգամ յայտարարելու՝ թէ ես չեմ զայն գրողը և ո՛չ ալ հեղինակին ու ըլլալը գիտեմ: Սակայն իմ փափաքածս ձեր սեփական փաստերը լսել էր. «Իրաւունք»-ի մէջ դեռ յիշեալ յօդուածը լոյս չի տեսած, դուք «Միութիւն»-ի մէջ գրելով՝ Պապը-Ալիի ցոյցին հետեւանքներուն պատասխանատուութիւնը անհատի մը վրայ կը ծանրացնէիք. անտարակոյս՝ գրածներդ հաստատելու համար փաստեր ունենալու էիք. որ համարձակեցաք գրել: Արդ՝ եթէ ունիք սեփական անհերքելի փաստեր յառաջ բերէք. թո՛ւ հասարակութիւնն ալ գիտնայ զանոնք: Չէ՞ որ (ձեր խօսքով) դաւաճան մը ժողովուրդին ճանչցնելու բացի և գովելի նպատակն ունիք: «Իրաւունք»-ի մէջ գրուածէն հանած փաստերնիդ՝ փաստ չէ. այլ հետեւութիւն. որովհետեւ յօդուածագիրը բացորոշ կերպով չէ յիշած զէնքի խնդիրը. կը հետեւցնէք թէ «անպատճառ ուրիշ սահմանափակ ժողով մըն ալ ունեցած են». բայց երբ կը գրէ թէ ամեն կէտի վրայ կը համաձայնին, զէնքի խնդիրն ալ կրնայ հասկցուիլ: Ուստի ատիկա իբրեւ փաստ չի կրնար ընդունուիլ: Արդ՝ ես կը փափաքէի որ, նախ՝ դրական փաստով ապացուցանէիք թէ անշուշտ սահմանափակ ժողովի մէջ որոշուած է զէնքի խնդիրը: (Սահմանափակ ըսելով կը հասկնանք 2-3 հոգիէ բաղկացած): Երկրորդ՝ թէ անպատճառ չարամտութեամբ մտցուած են զէնքերը: Առաջին հարցումիս գուցէ նորէն մէջ բերէք ձեր երկու վկաները, բայց այժմէն ըսեմ որ ասով կարելի չէ ժողովի սահմանափակութիւնը հաստատել, վասն զի անպարանքի մը պահուն կրնայ 2-3 կամ աւելի անդամներու ներկայութիւնը անհնարին դառնալ, սակայն մեծամասնութիւնը ներկայ գտնուելով օրինական ժո-

ղով կը նկատուի և թերեւս ձեր երկու վկաներն ալ՝ որոնց գոյութիւն ունենալին ալ ստուգապէս չգիտենք՝ ասանկ պարագայի մը հանդիպած կըլլան: Իսկ երկրորդ հարցումիս՝ չգիտեմ ի՞նչ հղօր փաստ ունենալու էք զայն հաստատելու համար, նոյն իսկ եթէ յաջողիք ապացուցանել՝ զէնք մտցնելու որոշումը 2-3 հոգիի գործ ըլլալու տակաւին չէք կրնար դաւաճան կոչել անոնց, որովհետեւ կարելի է բոլորովին բարեմտութեամբ ըրած ըլլան: Այդ պարագային ըրածնին անկարգապահութիւն, կանոնադանցութիւն կարելի է համարել. ուրիշ ոչինչ:

Պապ-Ալիի և Պանքայի ցոյցերուն ըրած բազդատութիւնս ծիծաղելի կը գտնէք, առանց սակայն բազդատութեանս մէջ սխալիլս յայտնող՝ որոշ փաստը կամ իրողութիւն մը ցուցնելու, միայն այն կասկածին վրայ հիմնուելով, թէ Պապ-Ալիի ցոյցին մէջ զէնք մըտցնողները անհատներ եղած են, և ուստի դաւաճան են՝ բանի որ որոշուած խաղաղասիրական ցոյցին մէջ զէնք մտցուցած են: Բայց կը կրկնեմ. դուք տակաւին չէք կրցած շօրաւոր փաստերով հաստատել, թէ արդարեւ անհատներու կողմէ գործադրուած է, կամ եթէ անհատներէ գործադրուած է իրօք չարամտութեամբ ըրած են: Իմ բազդատութիւնս սակայն հետեւանքներուն վրայ էր: Եւ ի՞նչպէս չի ծանրանալ հետեւանքներուն վրայ, երբ անոնցմէ ծագած է ձեր բոլոր կասկածները: Չէ՞ որ դուք կը հաւատաք թէ՛ եթէ ցոյցը անզէն ըլլար փուցէ հետեւանքը ծանր չըլլար, բայց երբ զէնքով եղաւ և անօգտակար, ուրեմն դաւաճանի մատ կը տեսնէք մէջը: Իսկ երբ ցոյցը բարերար և նպատակաւոր արդիւնքներ ունենար, անտարակոյս անոր կազմակերպիչները պիտի յարգուէին, պաշտուէին ամբողջ ազգէն, և նոյն ատեն զէնք մտցնողները անհատներ ըլլային իսկ պիտի չկրնայիք դաւաճան կոչել: Անանկ չէ՞: Սակայն ցոյցի անյառող հետեւանքները կասկածներ յարուցած է ձեր մոքերուն մէջ: Այսպէս ըլլալը թուաբանական ճշդութեամբ կը հաստատուի մանաւանդ այն պատճառով, որ եթէ դուք այդ ցոյցէն առաջ ձեր ակնարկած անձերը դաւաճան կը նկատէիք, ո՞ր էիք, ինչո՞ւ կը լռէիք: Իրօք՝ պարզ կերպով կը անանուի որ ձեր կասկածները ցոյցի հետեւանքներէն ծագում առած են: Լա՛ւ ուրեմն. ըսենք թէ անոնք դաւաճաններ ըլլալով թիւրք կառավարութեան պատրուակ ընծայելու նենգամտութեամբ ցոյցին մէջ զէնք մտցուցին. հապա Պանքայի ցոյցին Դրօշակեան կազմակերպիչները ինչե՞ր էին, որ զէնքով եղած ցոյցին հետեւանքները տեսնելով հանդերձ՝ համարձակեցան ռումբերով ցոյց ընել, արդեօք անոնք ալ դաւաճաններ էին՝ որ իրեն ցոյցին հետեւանքը՝ մինակ Պոլսոյ մէջ 6,000 հայու արեան հոսումը եղաւ . . .

* * *

Գալով ընկերական դատաստանի համար ըլլալիք ծախսերուն, օրէնքով դուք պէտք է վճարէք. նախ՝ որովհետեւ կարելի չէ առանց ամբաստանեալի մը բացատրութիւնները լսելու վճիռ արձակել անոր դէմ, ասիկա օրէնք է, և դուք առանց պ. Արփիարի բացատրութիւնները լսելու, կասկածներու վրայ հիմնուած՝ իբր դաւաճան վճիռ արձակած և դատա-

պարտած էք զայն, անոր համար դուք պարտաւոր էք կազմել պատուոյ ատենը, հոն ձեր փաստերով ու տօքումաններով հաստատելու ձեր ամբաստանութիւնները: Երկրորդ՝ որովհետեւ ամբաստանեալ մը այնքան ատեն արդար է որքան ատեն հաստատուած չեն իր դէմ եղած ամբաստանութիւնները: Հետեւաբար պ. Արփիարի անմեղութիւնը հաստատելու հարկ չկայ, արդէն անմեղ է քանի որ իր դէմ հանուած ամբաստանութիւնները հաստատուած չեն, և զանիկա անմեղ ճանչցողներուն համար բնա՛ւ նշանակութիւն չունի ընկերական դատաստանը, երբ արդէն անմեղ կը ճանչնան:

Ձեր գրածները՝ բացի երբ դրական փաստ պարունակէ՝ ինձ համար նշանակութիւն չունին և ո՛չ ալ գրածնիդ որ և է ազդեցութիւն ունեցած է հասարակութեան վրայ, և պիտի չունեայ սակե ետքն ալ ապահովաբար. այդ պատրանքը չունենաք. վասն զի ձեզ նկատմամբ ամենէն բարեացակամ մարդն իսկ կրնայ կասկածել, թէ թերեւս անձնական հակառակութեանց վրէժ լուծելու կիրքը միշտ ձեզ այդ տեսակ յօդուածներ գրելու, մանաւանդ երբ փաստ չպարունակեր, ինչպէս ամեն հանրային գործիչ, նոյնպէս ալ պ. Արփիարը ունի իր հակակիրները մանաւանդ իր գրչի խտութեան հետեւանք, գուցէ դուք ալ հանդիպած ըլլաք իր գրչին խտութեանը, և ձեր ընդունած հարուածին ազդեցութեանը տակ գրէք ձեր յօդուածները, որոնք թէ և աղմուկներ են միայն: Ինձ համար միակ կարեւորը «Դրօշակ» խմբագրութեան քով գտնուած (իբր թէ) տօքումանները, պաշտօնական թղթերն են, որոնք եթէ յերթւորանքներ չեն, կը բաւեն պ. Արփիարի դաւաճանութիւնը հաստատելու, և հարկ չի մնար ձեր և ուրիշներու վկայութեանը, իմ պահանջածս ատոնք էին ու են՝ պատուոյ ատենին մը ներկայացնելու համար:

Ուրեմն՝ պ. Թափառիկ, յանուն աղգային շահերու և յեղափոխութեան պատուոյն, լոյս ընծայեցէք ձեր մեծամեծ զոհողութիւններով ձեռք բերած տօքումանները, և անոնցմով յայտնեցէք (ձեր խօսքով) դաւաճանի մ. սե արարքները: Եթէ հրապարակ չպիտի հանէիք մեզք չէ՞ր անոնց համար ձեր ըրած զոհողութիւնները, մեծ զոհողութեանէ մը յետոյ՝ պզտիկ զոհողութիւն մըն ալ ընել չա՞րձեր արդեօք: Եթէ հրապարակ չէք հաներ՝ գէթ լռելու խիղճն ունեցէք, մ'արատաւորէք յեղափոխութիւնը ու յուսահատեցնէք ժողովուրդը: Իսկ եթէ կը յամառիք գրելու, գրեցէ՛ք որչափ որ կ'ուզէք. ես ալ շատերուն պէս ականջս ամուր մը պիտի փակեմ այլ ևս ձեր խժտութիւններուն առջև:

ԱՐՇԱԻՐ

Մանչեսթր. (Ամերիկա)

Գ Ի Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

Արփիարը ոչ սիրողներէն եմ և ոչ ալ ատողներէն, այլ իբր աղբ. անհատ մը կուգամ խոնարհ կարծիքս յայտնել:

Պ. Թափառիկ՝ իր «Կարծ պատասխանին» մեջ կրո՞նք որ ընկերային դատաստանի համար ըլլալիք ծախս-

քերը Արփիար կամ իր պաշտպանները պէտք է վը-
ճարեն. ըստ իս այս անիրաւ առաջտրկը փախուստ
տալու միջոց ընտրած են Արփիարը ամբաստանող-
ները. ուրիշ մեկնութիւն չէ կարելի տալ:

Պ. Թափառիկ կոսէ՝ «Ժամանակին մենք զայն
ճանչցած ու մահուան վճիռը արձակած՝ ենք իբր
գաւաճանք: Կ. Թափառիկին կը յաճնարարենք
չարդալ «Դրօշակ»-ը բոլոր թիւերը, տեսնենք թէ
պիտի գտնէ՞ Արփիարի սպանութեան փորձի առ-
թիւ գրուած յօդուած մը. և ինչու՞ համար այս
լուսթիւնը, քանի որ իրենց ամենափոքր գործու-
նէութիւնը կը հրապարակեն «Դրօշակ»-ի մէջ. պէտք
չէ՞ որ այդ սպանութեան փորձի մասին ալ գրէ-
ին ու հրապարակաւ յայտարարէին անոր մատնե-
ղութիւնը. — չիտակը մինչև հիմա այս խնդիրը մու-
թի մէջ մնացած է, անոր համար լուս կընէր Կ.
Թափառիկ եթէ հաճէր լուսաբանել այդ մութ կէտը:
Աւելորդ չեմ համարիր յիշեցնել Կ. Թափառիկին որ
այն ատենները Արփիարի վրայ փորձուած սպանու-
թեան համար «Հնչակ»ը կծու լեզու գործածեց,
նոյնը ըրաւ «Արմենիա», միայն «Դրօշակ»ը լռեց,
այն ալ կիրելի թէ Արփիարի մատնչութեան վրայ
հիմնական փաստեր չունենալը հասկնալով լռեց.
մենք չատերս գտնէ այս մեկնութիւնը կըցինք տալ.
եթէ սխալած ենք, Կ. Թափառիկ՝ թող հասի բա-
յատրել մեզ:

Մինչև հիմա դանաղան թերթերու մէջ գրու-
ածները Արփիարի մատնչութիւնը հաստատող գրա-
կան փաստեր չեն ներկայացներ, հեռաւարտ ժո-
ղովրդի չէզոք դատակարար չէ կարող որոշել թէ
Արփիար իսկապէս մեղաւոր է թէ արդարօք զա-
սակարգը ըսի. ինչու որ կուսակցականները իրենց
առանձին որոշ գաղափարն ունին արդէն. եթէ
Դարտականի մը հարցնես, Արփիար լաւ մարդ է կըսէ.
Եթէ Դրօշակեանի մը հարցնես, հակառակը կը
խօսի. Ասոր ամենադիւրին միջոցն է ժամ առաջ
իութալ ընկերային դատաստան կազմել և Արփիա-
րը դատի հրաւիրել. իսկ ըլլալիք ծախքերը երկու
կուսակցութիւնները պէտք է վճարեն:

Յարգելի ընթերցողը թող չկարծէ գիտնալ թէ
կողմնակից մեմ, ոչ. դարձեալ Կ. կրկնեմ խօս-
կըս. Արփիարը ոչ սիրողներէն, և ոչ ալ ատող-
ներէն եմ, իր կուսակցութեան ալ չեմ պատկա-
նիր, այլ Նազարպէկի ժամանակ Հնչակեան կու-
սակիցներէն մին եղած եմ, իսկ այժմ իբր ազգ.
չէզոք անհատ մը, տեսնելով հրապարակի վրայ
եղած սին վէճերը, պատշաճ համարեցի իմ անհատա-
կան խոնարհ կարծիքս յայտնել:

ՄԱՏԻՍՈՆ

Գ. Կ. Գ.

(Ամերիկա)

ԱՆՄԱՋ ԺԻՐԱՅՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ի

Ժիրայրը տեսնելով որ իր ներկայութիւնը երթա-
լով վտանգաւոր կը դառնար թէ՛ իրեն և թէ՛ ամբողջ

գիւղացիներուն համար, նպատակի սիրոյն համար ո-
րոշեց շուտով հեռանալ անտի, իր այս գիտաւորու-
թիւնը յայտնեց գիւղացի ընկերներուն, որոնք թէև
խորապէս տխրեցան սկիզբը, սակայն վտանգի հետե-
ւանքները աչքի առաջ բերելով համոզուեցան ու միա-
ձայն վճռեցին ճամբայ դնել զայն:

Մեր յիշած մատնչութեան տիտուր դէպքէն ի վեր
հազիւ երկու օր անցած էր, մուծ գիւղեր մը գիւղէն
չորս հոգի ճիւղով առջ կռօռկացութեան մը բռնուած
կէս ժամու չափ հեռանալով աղբիւրի մը գլուխ նըս-
տան. անոնցմէ մին ժիրայրը ինքն էր, որ խորիտ ձայ-
նով մ ըսաւ. «Սիրելի եղբայրներս, ահա տառնեմէկ
ամիսներէ ի վեր ձեզ հետ ապրեցայ, եթէ մեր սիրելի
հայրենիքի ներկայ դառն վիճակն չը լինէր, երբէք չը
պիտի ուզէի վայրկեան մը իսկ հեռանալ ձեզմէ, սա-
կայն դժբաղդաբար ճակատագիրը տարբեր որոշած է.
Թէև կը հեռանամ անձամբ. բայց սրտով ու հոգով
միշտ ձեր հետ պիտի ըլլամ. միայն սա կը խնդրեմ որ
չըլլայ թէ իմ հեռանալէն վերջ ձեր նպատակէն մազի
չափ չեղիք. շատ հաւանական է որ թշնամին զ ձեզ ձեր-
բակալէ, չորհարէ և նոյն իսկ կախալանի վրայ զձեզ
մեռցնելու սպառնալիք ընէ, երբէք մի՛ թուլանաք.
յիշատիսականի մը համար աններելի ոճիր կը հա-
մարուի դատալիք ըլլալ: Մեր դատը սուրբ է և նուի-
րական, զայն ի գլուխ հանելու համար պէտք է մեղ-
ամէն ջանքերն ի դուռ դնել. նոյն իսկ անձերնիս զո-
հելով, եթէ հարկ լինի: Իրաւ մենք Կ. մեռնինք, բայց
մեռնելէ աւելի կ'անմահանանք. մեր մահն է որ կեանք
պիտի տայ մեր սիրելի հայրենիքին. յիշեցէ՛ք մեծ
հայրենասէր բանաստեղծին խօսքը.

«Դու մի անգամ մեռնելուց վախցար

«Մինչ մահուան օրդ հազար մահ տեսար...»

Այժմ գալով այդ գաւաճաններու արարքին երբէք
թող չվճատեցնէ զձեզ, այն օրէն երբ ձեր գիւղը ոտք
դրի՝ հիմակուան պէս գիտէի որ օր մը պիտի մատ-
նուէի և այն ալ իմ սիրելի ազգակիցներէս. իսկ դուք
չկարծէք թէ միայն մեր ազգի մէջ կը գտնուին այդ
տիտուր սև սև դէմքերը. կարդացէ՛ք Պուլկար Լեւակի
պատմութիւնը հոն պիտի գտնէք Փօփ-Քրիստոս մը,
ո՞վ էր այդ սև դէմքը, Լեւակիի երբեմն հաւատարիմ
ընկերը, որուն այնչափ վստահած էին որ նոյն իսկ
յիշատիսական կազմակերպութեան ոյժը եղող զը-
րամը անոր յանձնած էին, բայց այդ դիմակի ներքե-
ւէն ի՞նչ գուրս եկաւ, ուխտագրութ դաւաճան մը:
Ուրեմն մասնիչները թող իրենց տիտուր դերը կատա-
րեն, մենք ալ մերինը կատարելէ չի թերանանք. քաջ
համոզուած լինելով որ մենք մեր պատկանած ազգի
և մարդկային ընկերութեան ամենաազնիւ մասին կը
վերաբերինք, իսկ անոնք՝ ոչնչացած ու նեխած, շատ
հեռու չէ որ հակառակ իրենց երեւակայած հանգիստ
կենցաղին օր մը գուցէ յիշատիսականի դաշտինը կար-
ճեցնէ անոնց զապրալի կեանքի թելը, քսելով միայն
անոնց սև ճա տին նախատանաց յաւիտ ենական
մուրը:»

Երբ խօսքը աւարտեց երկու վայրկեանի չափ լուռ-
թիւն տիրեց, վերջապէս ընկերներէ մին լուսթիւնը
խզելով հարցուց ժիրայրի թէ դէպի՞ ո՞ւր երթալ որո-
շած էր և ի՞նչ պայմաններու տակ, արդեօք բաժա-
նումնին վերջնական էր, թէ դարձեալ մէկվմէկ տես-

նելու և կամ թղթակցելու բաղձը պիտի ունենային։ Ժիրայր պատասխանեց թէ՝ մտադիր է քիչ մը ժամանակ շատ հեռուն չերթալ և անձամբ ահա՛նել թէ, տեղի ունեցած մատնութիւնը՝ ո՞ր պիտի հասնէր, ու ի՞նչ առաջաւ բնակութիւն հաստատած տեղէն լուր տալ իրենց ընկերներէն մէկուն միայն և մօտէն հրահել իրենց վրայ։

Մէկ մէկ սիկար վառեցին ու քիչ մը ևս խօսակցելէ վերջ ոտքի ելան։ Իրենց անձնուէր ընկերով բաժանուիլ շատ սրտաշարժ էր. կարծես մէկ տեղ սնած ու մեծցած ընկերներ էին, վերջին անգամ մէկըմէկ համբուրելով բաժնուեցան։

Ժիրայր տալաւ չհեռացած կրկնեց քիչ առաջ ըրած յանձնարարութիւնը թէ քաջութեամբ դիմադրեն գալիք ձախորդութեանց, վասնզի՝ ըսաւ եթէ մենք անկեղծ հայրենասէրներ ենք, համոզուած ըլլալով որ առանյ Վարեան չի՛ք ազատութիւն»։ Մընաք բարեաւ, երթաք բարեաւ սովորական հրաժեշտը տալով, Ժիրայր մութին մէջ անհետացաւ, խոր տխրութեան մէջ թողնով իր երեք ընկերները որոնք գլխիկոր գիւղ դարձան։

Ժիրայրի մեկնելէն քանի ժամ վերջ կուսակալութեան կողմէ գրգռելու տառնապետ մը և հինգ ոստիկան, որոնց հրաման տրուեց էր ձերբակալել Ժիրայրը, բայց երբ իմացան անոր մեկնած ըլլալը, Գիւղէն 10 երիտասարդներ շղթայի զարկած քաղաք փոխադրեցին և անկէ ալ կուսակալանիստ քաղաքի կեդրոնական բանտը։ Աննկարագրելի էր ձերբակալելս տրուած շարժարանքը ճանապարհին. նախ ձեռքերնին գելարանի (քէլփչէ), վիզերնին ալ երկաթէ լուծ (լալէ) անցուցած և մի շղթայով տասն ալ իրարու կապած, 12 հեծեալ ոստիկաններու հրահողութեամբ ճամբայ հանուեցան. ճանապարհին մէկ երկուքը հիւանդացան և բոլորովին անկարող եղան քալելու, սակայն մոլեռանդ ոստիկանները անգթութեամբ յառաջ կը վարէին, հիւանդներէն մէկուն անկարելի եղաւ շարժիլ, ոստիկաններէն մէկը սուրը քաշած սպառնացաւ զարնել. Կալանաւորներէն յանդուգն և քաջասիրտ երիտասարդ մը ալ ևս չկարենալով հանդուրժել, երկու ձեռքը մէկէն վերցնելով լիբր ոստիկանի գլխուն հարուած մը իջեցուց գելարանով. ոստիկանները կիւղուռի մը այդչափ համարձակութենէն կատղած ուզեցին յարձակիլ կալանաւորներուն վրայ, սակայն տառնապետը հասնելով արգիլեց, և դառնալով երիտասարդին հարցուց զարնելուն պատճառը, նա՝ աներկիւղ պատասխանեց թէ «4-5 օրէրէ ի վեր առանց խնայելու, կապանքներու տակ պրկած բռնի յառաջ կը թանին զիրենք, այսօր մանաւանդ իրենցմէ մէկը մահուան դուռը հասած, այլևս անկարող էր քալելու, փոխանակ իբր մարդ մի քիչ գթութեամբ վարուելու կ'սուգէին զիակը քալեցնել, ուստի չկարելով հանդուրժել այդ աստիճան տառաջութեան, զարկած էր»։

(Շարունակելի)

ԱԼԼԻՍԻ ՈՐԴԵԳԻՐԸ

Ի Փ Ա Ռ Ս Կ Ա Ր Ի Պ Ա Լ Տ Ի Ի

Երէկ, կիրակի, (26 մարտ Բ. Ե.) տեղի ունեցաւ Տիգօն քաղաքին մէջ Կարիպալտի արձանին բացման հանդէսը, որ խիստ փայլուն եղաւ. հազարավէժ ժողովուրդ մը ներկայ կը գտնուէր հանդէսին, նախկին զինուորներու (1870ի պատերազմին մասնակցող շատ մը ընկերութիւններ հոն ներկայ էին. Կարիպալտի ծնած քաղաքը ներկայացուած էր. պ. պ. Հիւծաթի և Ջիպրիանի ներկայ էին, Սէնի քաղաքապետութիւնը ներկայացուցիչներ զրկեց էր. վերջապէս՝ նախկին մինիստրներ, ծերակուտականներ և շատ մը երեսփոխաններ ներկայ գտնուած էին։

Պր. Լէյկ՝ կրթութեան մինիստրը, հասաւ ժամը 2ին. հանդէսը տեղի կ'ունենայ ժամը 3ին և կը վերջանայ ժամը 5ին. Պաշտօնական բեմէն վրայ կը տեսնուէին Ֆէրոն, Լաւալ, Մուանօ զօրավարները և շատ մը սպաներ, խառնուած երեսփոխաններու, ծերակուտականներու և քաղաքական ուրիշ բարձրաստիճան անձնաւորութեանց հետ։

Երբ արձանին շինութեան համար կազմուած յանձնախումբը չէնքը քաղաքապետութեան յանձնելու արարողութիւնը կատարեց, ներկաներու մէկ մասը «կեցցէ՛ բանակը» ղոչեց, ասոր վրայ փոքրիկ իրարանցում մը և խառնակութիւն մը պատահեցաւ և վեց հոգի ձերբակալուեցան։

Պր. Լէյկ և ուրիշ ութ անձեր ճառեր խօսեցան. Լէյկի ճառը շատ ծափահարուեցաւ. մինիստրը Կարիպալտի ողջունեց հիացումով և ակնածութեամբ։

* * *

Այն օր գիտէ և մենք ալ այդ մասին բաւական տեղեկութիւններ տուինք արդէն թէ Յուցահանգիստին բացման և փակման վեց ամիսներուն մէջ Բարիդի մէջ բաւական թուով գիտական ժողովներ կամ համաժողովներ տեղի պիտի ունենան։

Այդ համաժողովներուն մէկ քանին մասնակցելու համար հրաւիրուած են նաև մի քանի հայեր, որոնց անունները արդէն հրատարակուեցան ազգային թերթերու մէջ, ոմանց անունն ալ չհրատարակուեցաւ։

Այդ չհրատարակուածներէն մին է «Բանասէր» խմբագիր պ. Կարապետ Բասմաջեանի անունը, որն հրաւէր ստացեր է մասնակցելու համեմատական պատմութեան միջազգային քօնկրէսին, որուն առաջին գումարումը տեղի ունեցաւ անցեալ 1899ին Լա Հէյի մէջ և երկրորդը Բարիդի մէջ տեղի պիտի ունենա Յուցահանգէսի ժամանակ, Գօլէժ տը Ֆրանս անուն բարձրագոյն վարժարանի շէնքին մէջ։

A. Saissi և Մելիք Ս. Դաւիթ բէկ

Բարիդ

Հ Ի Ա Խ Է Բ - Յ Ա Յ Տ Ա Բ Ա Բ Ո Ի Թ Ի Խ Ն

Սիրելի Հայրենակիցներ,

Պապ-Ալիի և Պանքայի ծանօթ յեղափոխական շար-
ժումներու ձախող հետեւանքներէ վերջ Ազգին մէջ
գոյութիւն ունեցող երկու յեղափոխական մարմին-
ները սկսած էին ունենալ իրարու դէմ թշնամական
վարմունք մը՝ հալածելով, զրպարտելով և բամբակ-
լով զիրար իրենց պաշտօնական բերան թերթերու,
թռուցի ներու և չըջաբերականներու միջոցաւ: Այս
վարմունքը չա՛տ գայթակղալից էր այդ երկու կուսակ-
ցութեանց համար, որոնք միեւնոյն նպատակով միե-
նոյն թշնամիին դէմ կռուելու կոչումն ունէին: Եւ
ամօթալի մեզ համար, որ իրաւարարի հեղինակու-
թիւնն ունենալով՝ ցարդ անտարբեր մնացինք, ո՛ր և է
միջոց չի խորհեցանք այդ աղետալի ընթացքին վերջ
մը դնելու, կուսակցութեանց սոյն վարմունքն և մեր
անտարբերութիւնը շատ սուղի նստած է հայ ժողո-
վրդին, ալ լռելը ներելի չէ...

Վերջերս առ հասարակ արտասահմանի բոլոր հայ
գաղթականութեանց մէջ գաղափար մը յղացուած է,
այսինքն՝ առաջարկել այդ երկու կուսակցութեանց
ղեկավարող մարմիններուն թէ պէտք է գումարել
ազգային չեզոք անհատներէ ընկերային ատեան մը,
ուր ամբաստանող և ամբաստանեալ կողմերը պար-
տաւոր են ներկայանալ հաստատել և պաշտպանել
մինչև ցարդ հրապարակաւ գրուածներն ու խօսուած-
ները, որպէս զի մի անգամ ընդ միշտ վերջ տրուի
երկու կուսակցութեանց իրարու հանդէպ ունեցած այս
գայթակղալի ու ամօթալի ընթացքին: Պէտք է յաւե-
լուլ նաեւ թէ այդ ատեանին առած վճիռը պիտի ըլ-
լայ վերջնական ու վճռական:

Ուրեմն՝ սիրելի Հայրենակիցներ, մեր այս ազգա-
յին պարտականութեան մէջ այլեւ չթերանալու հա-

մար անհրաժեշտ է ընդհ. ժողով մը գումարել սոյն
խնդրի առթիւ խորհրդակցութիւն ընելէ՝ յետոյ՝ պարտ
ու պատշաճը դրել երկու կուսակցութեանց ղեկա-
վարող մարմիններու:

Ժողովը պիտի գումարուի Ապրիլ 16ին, Զատիկ
Նոր կիրակին, կէս օրէն յետոյ ժամը 2ին, Վարիէթէի
թատրոնը:

Կը յուսանք թէ՛ Ազգին Ս. Դատին նախանձա-
խնդիր բոլոր Հայրենակիցները պիտի փութան գործ-
նական ապացոյցը տալ ժողովին իրենց ներկայու-
թեամբը:

Ընդհ. ժողովի կարգադիր մասնախումբ Աթէնքի
1 Ապրիլ, 1900 Աթէնք (Ստորագրութիւնը)

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԻԱ

Գերմանական թերթի մը Ս. Փէթրոպոլսկի թըղ-
թակիցը կը գրէ թէ՛ Ռուսիա Փոքր-Ասիոյ մէջ եր-
կաթուղիի շինութեանց գործը ռուս ընկերութեանց
տրուելը յաջողցնելէ վերջ՝ ունի նաեւ ուրիշ աւելի մեծ
պահանջները զորս հետզհետէ պիտի ներկայացնէ Բ.
Դրան: Սոյն պահանջներուն ամենակարեւորը կրնայ
նկատուիլ Ռուսիոյ նաւատորմի Տարտանէլէն Սև
ծով մտցնելու առաջարկը, զոր յաջողցնելու համար
յարմարագոյն առթի մը կը սպասէ:

ԵՐԿՈՒ ՀԱՋԱՐ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐՈՒ ԿՈՏՈՐԱԾԸ

Ի Հ Ա Պ Է Շ Ի Ս Տ Ա Ն

Վիեննայէն Մարտ 25 թուով կը հեռագրեն թէ
Հապէշխտանի Սարար քաղաքին մէջ թուրքերու և

ԹԵՐԹՕՆ «ՄԻՈՒԹԻԽՆ»Ի

2)

Վ Ա Յ Է
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՐՈՍԸ

Ս Ի Բ Ո Ղ Ս Բ Տ Ե Բ

—Ախ, Վահէ՛, միթէ դու կամ ես կարող ենք մէն
միայնակ դէմ դնել այն կատաղի ամբսխին, որին մենք
յաճախ տեսնում ենք նոյն ապօրինի գործերով դրաղ-
ւելիս, նոյն անամօթութիւնները առաջ տանելիս: Եւ
որքան ճիշդ են նկատուի մեր մեծերը, մեր ծնողները,
—մենք ո՛չինչ ենք նրանց առաջ. —անխախտ մի-
ջատներ, կամ աւելի ճիշդ կաւի արձաններ, որ փըշ-
րում ենք նրանց գործ դրած ճնշումի ներքոյ. «կաւէ
ամաններ, որ փշրում ենք երկաթէ գաւազաններէց»:
Հաշուիր այդ մտքերի հետ, Վահէ՛, և համոզուիր, որ
մի ծաղկով գարուն չի լինիլ, այլ այն ուրիշ բան էր,
եթէ մեր քաղաքի ողջ Հայ երիտասարդութիւն քեզ
պէս մտածէր... Ախ, հէնց մեր հայերիս անմիա-
բանութիւնը, թուլութիւնը, ոչնչութիւնն է, որ ա-

կամայ երկիւղ է ազդում ինձ... Ես երբէք չեմ
մոռանում, որ այսօր կամ վաղը, շուտ կամ ուշ ես
չեմ կարողանալու խուսափել դրանց յարձակումից. դա
ինձ համար արդէն ամեն բանից պարզ է. իսկ երբ
երեւակայում եմ, երբ ընկնում եմ այդ պժգալի երեւա-
կայութեան անեղք պնդումի մէջ, ես սոսկում եմ,
բառի իսկական նշանակութեամբ... Տեսնել տաճկի
լպիրը երեսը, ենթակայ լինել նրա ցասկոտ կրքերին,
փակել և յաւիտեան կտրած արտաքին աշխարհից
անպատիւ կերպով մնալ հարէմում... Ախ, ախ,
Վահէ ջա՛ն, դու քո ձեռքով սպանիր ինձ, իրիւր դա-
շոյնդ կոկորդոս... Ես բոլորովին զղւել եմ այլեւս
այս սև ժամանակից, ժամանակ՝ որին դեռ ես ուրիշ-
ները լուսաւոր կոչելու յաւակնոտութիւնը ունին...
Հարժէ ապրիլ այսպիսի սև ժամանակում...

—Հանդարտուիր, հոգեակա, ընդհատեց նորան
Վահէն գրկելով. մենք աւելի շուտ միասին կը մեռ-
նինք, քանի որ այդպէս կը լինի... Երդում եմ,
հաւատարիմ մեր ուխտին. մինչև արեանս վերջին
կաթիլը կուեղ իմ թշնամու հետ, միայն և միայն քեզ
պաշտպանելու համար, և եթէ իրօք վիճակւած լինի
մեզ մեռնիլ, պատուով կը մեռնենք այն ժամանակ
միասին, յաւիտենական և անմահ կեանքի մէջ իրար
կրկին արժանանալու յուսով... և ահա կրկին

բրիտանացի միջև կրօնական վեճ մը պատահելով, վերջիններս յաջողած են 2000 հաւատացեալներ երկնային ճէննէթը ղրկել:

Մէնէլիք թագաւորը խռովութիւնները զսպելու համար 8000 հեծեակազօրքեր ղրկած է:

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

Հ. Ս. ԵՓՐԻԿԵԱՆԻ

Լոյս տեսած է այս ընդարձակ գործին առաջին քսանթերթեան պրակն, որ կը բաղկանայ 160 երկսիւն էջերէ և զարդարուած է 80ի չափ խնամատիտ պատկերներով: Կը պարունակէ մեր երկրի նահանգաց, գաւառներու, քաղաքներու, վանքերու, գիւղերու, գետերու, լեռներու և այլ նշանաւոր տեղեաց վրայ, աշխարհագրական, պատմական, հնարօտական և այլ կարևոր օգտակար տեղեկութիւններ: Առաջին պրակի գինն է ճանապարհի ծախքով 3 ֆր. կանխիկ:

Հասցէ Direction de l'Imprimerie Armenienne (St. Lazare) VENISE (Italie)

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

Գ ի տ ա կ ա ն եւ գ ր ա կ ա ն

ԱՄՍԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամիսը մի տնգամ, խմբագրութեամբ Տ. Տ. Մ. Պաղտատարեանի և Յովհ. Շաւարշի, ի Բարիզ, Իւրաքանչիւր թիւն պիտի ունենայ առնուազն 48 էջ. բաժնեգինը կանխիկ է:

Տարեկան բաժնեգինն է՝

	Տարեկան	Վեցամսեայ
Ֆրանսա	10 ֆր.	5 ֆր.
Օտար երկիրներ . . .	12 »	6 »

Երգւումեմ պատուով:

—Եթէ այդպէս է վաճէ՛, կարծեմ՝ ես էլ ոչնչով պակաս չեմ քեզնից . . . նոյն օրինակ վերաբերել՝ երգւումեմ քո արեւով . . .

ԱՐՅԱՒԻՐՔԸ

1896 թւի գարնան վերջերն էր. արեւն հետզհետէ կիզող էր դառնում և օրւայ տապը զգալի: Ամբողջ Վասպուրականը հանգչում էր սարսափի և արհաւիրքի թմրեցուցիչ աղբեցութեան տակ. ամենքն սպասում էին սարսուռով մի ահաւոր բանի, և սրտերը զանազան կերպ էին վկայում . . . մինչ մէկը բոցավառ յուսոյ ճառագայթներով տոգորւած զգում էր և ըստ պատում՝ թէ ահա չուտով լսելու է մի աւետաբեր ձայն, մի ուրիշը զգում էր մի որ և է աղէտի մօտալուտ լինելը. իսկ թէ այդ բոլոր զգացմունքներից որն էր արդարացի, այդ ապագան միայն գիտէր:

Այդ սարսափելի դրութիւնը իւր ծայրայեղ աստիճանին էր հասած մանաւանդ քաղաքում, վանում, Հայոց թաղերում:

Ամենքը քաշած իրանց տները՝ լուռ և մտախոհ սպասում էին գալիք պատուհասին կամ աւետաբեր

Թուրքիա 50 զր. (ողջ) 25 զր.
Ռուսիա 5 զր. 2 50 կպ.
Ամերիկա 2 տոլ. 1 20 սթ.
Մէկ թիւը Ֆրանսա 1 ֆրանք:

Բաժանորդ գրուիլ յանկացողները պէտք է դիմեն իր հետեւեալ հասցէին՝

Redaction du «Hamalsaran»

3 Place Moïge 3

Paris

«ԲԱՆԱՍԵՐ»

Հանդէս եռամսեայ Հնարօտական, Պատմական, Հեղուարանական և քննական:

Բանասէրի տարեկան գինն է 20 ֆր. ամեն տեղի համար: Մէկ գիրքը կ'արժէ 6 ֆր.—Բաժանորդագրութիւնը կանխիկ է: Բանասէրը շատ քիչ քանակութեամբ տպուելուն համար կը խնդրուի որ բաժանորդ գրուելու փափագողները՝ ժամ առաջ յայտնեն իրենց հաճութիւնն:

Հասցէ՝ Mr K. J. Basmadjian

PARIS 112 Bd. Rozechhourta

«Միութիւն»ի տպարանէն ութ-տասը օխտ տասեր գողցուեցան, հակառակ մեր ջանքերուն մինչեւ ցարդ չկրցինք այդ գողութեան հեղինակի հետքերը գտնել: Մնացած տաւերը թերթին տնբաւական ըլլալով ստիպուեցանք ծրոգ էջը բաց թողուլ:

ձայնին: Եւ ամբողջ մի շաբաթ էր, որ այդ դրութիւնը շարունակուում էր: Եթէ փողոցում պատահում էր, որ երկու հայեր ամենակարեւոր մի բանի համար շտապելիս հանդիպում էին իրար, մինչև իսկ չէին բարեւում միմեանց, այլ լուռ և գլխիկոր անցնում էին: Անվստահութիւնն էր ստիպում նրանց լռել և տանիլ ճակատագրի բոլոր խաղերը առանց տրտնջալու: Սակայն այդ լռութիւնը հետզհետէ աւելի ու աւելի էր բորբոքում մարդկանց սրտերը խօսելու, բացառելու ցանկութեամբ:

Այս ընդհանուր սոսկումի և արհաւիրքի ժամանակ վաճէն հանգիստ չունէր. նա ամեն ժամ, ամեն րոպէ արթուն էր և պաարաստ: Նա օրը երեք-չորս անգամ իր պաշտելի նաղուի մօտ էր շտապում:

Եւ այդ ժամանակ այդ երկուսի հանդիպումը շատ սրտաշարժ էր լինում ամեն անգամ. այնպէս էին նրանք գրկախառնում, լացում, կոծում, կարծես տարիներով տեսած չըլինէին իրարու: Բայց ո՛չ. նրանց էլ երկիւղն էր ստիպում այդպէս վարել, որ մի գուցէ յանկարծ զոհ գնային տաճկի սրին կամ գնդակին՝ առանց իրար վերջին համբոյրին արժանանալու:

—Ախ վաճէ . . .

—Ո՛հ նաղու . . .

(Կը շարունակւի)

Ա. ԱՄՄԱՆ

